

## ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում ՀՀ առողջապահության նախարարը խոսել է ոչ վարակիչ հիվանդությունների խնդիրների եւ անելիքների մասին

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի ժամանակ ունեցած ելույթում նախարար Արսեն Թորոսյանը ներկայացրել է ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ազգային ռազմավարությունը, խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև հայաստանյան վիճակագրությունն ու անելիքները:

Նախարարի ելույթն ամբողջությամբ՝ ստորեւ:

«Հարգարժան նախագահ,

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Ինձ համար մեծ պատիվ է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունն այստեղ՝ շրջապատված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի առաջնորդներով և առաջամարտիկներով:

Նախ թույլ տվեք ընդգծել, որ առողջապահական բոլոր ծրագրերը Հայաստանում իրականացվում են ԱՀԿ-ի գլոբալ ռազմավարության շրջանակներում: Մենք նաև հաշվի ենք առնում «Առողջապահություն 2020»-ի և կայուն զարգացման նպատակները՝ մեծապես կարևորելով դրանք մեր ազգային ռազմավարական զարգացման առումով:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու վերահսկումը, ինչպես նաև առողջ ապրելակերպի խթանումը ՀՀ կառավարության առողջապահական օրակարգում գերակայություն են: Մեր խնդիրներն ու նպատակներն են, մասնավորապես,

1. Բարելավել մեր գործունեությունը՝ հիմնվելով կանխարգելիչ ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վրա,
2. Իրականացնել հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված քայլեր,
3. Ուժեղացնել ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկողությունն ու ռիսկի գործոնների մոնիթորինգի համակարգը՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական գործոնները,
4. Վերապատրաստել մասնագետներին,
5. Բարելավել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և կառավարման ծառայությունները՝ ներառյալ առաջնային կանխարգելումը, վաղ հայտնաբերումը, բուժումը, վերականգնումը և պալիատիվ խնամքը:

Այժմ՝ թվերով: Ինչպես առավել զարգացած երկրներում, այնպես էլ Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունները մահվան հիմնական պատճառն են: Ես հատկապես ուզում եմ ընդգծել սրտանոթային հիվանդությունները (56%), քաղցկեղը (21%) և դիաբետը (3%): Մենք լիովին կիսում ենք ԱՀԿ-ի տեսլականն այն առումով, որ կենսակերպը ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման հիմնական ռիսկի գործոններից մեկն է:

Ցավոք, Հայաստանում ծխողների մեծ թիվ ունենք (մեծահասակների մոտ 52%-ն ամենօրյա ծխող է): Մենք ներկայում աշխատում ենք ծխախոտի դեմ պայքարի նոր օրենքի վրա և վճռական ենք հաղթել ծխելու դեմ պայքարում և պաշտպանել մեր քաղաքացիների առողջությունը:

Առողջ ապրելակերպի թեմայով պետք է նշեմ նաև, որ մենք լավ դիրքերում չենք գտնվում հավելյալ քաշ ունեցող բնակչության (48%), ալկոհոլի չարաշահման (6%) և ոչ բավարար

Ֆիզիկական ակտիվության (21%) տարածվածության առումով: Ընդհանուր առմամբ, տղամարդիկ առավել հաճախ են ենթարկվում բարձր ռիսկի՝ պայմանավորված ծխախոտի և ակտիվ կիրառման ռիսկային վարքագծով, մինչդեռ կանայք ֆիզիկապես պակաս ակտիվ են և հաճախ ունեն հավելյալ քաշ:

Այդ իսկ պատճառով մեր կառավարությունը որդեգրել է առողջության կերտման և պահպանման, ինչպես նաև առաջնային բուժօգնության հզորացման ուղին: Ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման կանխարգելումը մեր նախանշած նպատակն է՝ փոխանակ ծախսելու սահմանափակ ռեսուրսներն արդեն ուշացած ու թանկ արժեցող բուժման կամ մեր սխալների շտկման վրա:

Համոզված եմ, որ ոչ վարակիչ հիվանդությունները կարող են կանխվել, եթե մենք գլոբալ մակարդակով համատեղենք մեր ջանքերը՝ պայքարելու ռիսկի բոլոր գործոնների դեմ՝ ծխախոտ, անառողջ սննդակարգ, ֆիզիկական թերակտիվություն և այլն:

Տիկնայք և պարոնայք,

Անենք մեր վճռական համատեղ քայլը՝ միտված մեր առողջ ապագային:

Շնորհակալություն ձեր ուշադրության համար»: